

Հավելված

Հայաստանի Հանրապետության  
Շիրակի մարզպետի 2013 թվականի  
դեկտեմբերի <<\_\_\_\_>> -ի թիվ  
<<\_\_\_\_>> որոշման

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) կառուցվածքային ստորաբաժանում է, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է մարզի կրթական, մշակութային և մարզական համակարգերի գործունեության ղեկավարումը, պատասխանատու և հաշվետու է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին (այսուհետ՝ Մարզպետ):
2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով ու կարգադրություններով, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կանոնադրությամբ, Մարզպետի որոշումներով ու կարգադրություններով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:
3. Վարչությունը իրականացնում է կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների վերաբերյալ Մարզպետի որոշումների և կարգադրությունների նախագծերի նախապատրաստումը, դրանց կատարման նկատմամբ վերահսկողությունը:
4. Վարչությունը մարզի տարածքում կրթական, մշակութային և մարզական հաստատությունների գործունեության համակարգումը իրականացնում է անկախ նրանց կարգավիճակից և սեփականության ձևից:
5. Վարչությունը ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:
6. Վարչության կանոնադրությունը հաստատում և փոփոխում է Մարզպետը:

#### II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

7. Վարչության հիմնական խնդիրն է ապահովել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Մարզպետին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացումը:
8. Վարչությունն առաջարկություն է ներկայացնում կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների պետական պատվերի շրջանակներում տեղերի ծրագրավորման վերաբերյալ:
9. Վարչությանն իրավունք է վերապահվում.

- 1) մարզպետին ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մարզային ենթակայության կրթական, մշակութային և մարզական հաստատությունների ստեղծման, վերակազմավորման և լուծարման վերաբերյալ առաջարկություններ,
  - 2) վերահսկել մարզի կրթական, մշակութային և մարզական հաստատությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրությանը:
10. Վարչությունն իր գործունեության շրջանակներում.
- 1) ապահովում է պետական հանրակրթական, մշակութային և մարզական ծրագրերի իրականացումը,
  - 2) վերահսկում է ոչ պետական ուսումնական հաստատությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրությանը,
  - 3) համակարգում և վերահսկում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, նրանց ընդգրկումը կրթական, մշակութային և մարզական հաստատություններ,
  - 4) իր իրավասության շրջանակներում նախապատրաստում է կասեցնող փաստաթղթի նախագիծ մարզային ենթակայության կրթական, մշակութային և մարզական հաստատությունների ղեկավարների կողմից ընդունված հրամանների և հանձնարարականների նկատմամբ, որոնք հակասում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Մարզպետի որոշումներին, կարգադրություններին և համապատասխան գործադիր մարմինների նորմատիվ փաստաթղթերին,
  - 5) օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնում է առաջարկություն մարզային ենթակայության կրթական, մշակութային և մարզական հաստատությունների ղեկավարների խրախուսման, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին,
  - 6) սահմանված կարգով մասնակցում է պետական կրթական, մշակութային և մարզական հաստատությունների ղեկավար և մանկավարժական անձնակազմի ատեստավորմանը,
  - 7) վերահսկում է հանրակրթական առարկայական պետական ծրագրերի կատարման ընթացքը,
  - 8) վերահսկում է սովորողների փոխադրման, վերաքննությունների, որակավորման ստուգումների, օլիմպիադաների, փառատոների, մրցույթների կազմակերպման և անցկացման համապատասխանությունը գործող կարգին,
  - 9) վերահսկում է ուսումնական, մշակութային և մարզական հաստատություններում նորմալ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովումը,
  - 10) վերահսկում է ուսումնական, մշակութային և մարզական հաստատություններում նախնական զինվորական պատրաստության առարկայի պետական ծրագրերի կատարումը, նրանց իրականացման պայմանները, սովորողներին ռազմահայրենասիրական ոգով դաստիարակելու գործընթացը,
  - 11) ապահովում է ուսումնական, մշակութային և մարզական հաստատություններում սովորողների իրավունքների պաշտպանությունը, առողջության ու անվտանգության պայմանները,
  - 12) կազմակերպում և համակարգում է ավարտական վկայականների, ատեստատների, դիպլոմների ստացման և բաշխման աշխատանքները,
  - 13) կազմակերպում է մարզում ազգային ծեսերի և ավանդական տոնախմբությունների, մշակութային փառատոների անցկացումը,
  - 14) ապահովում է մարզի տարածքում ազգային մշակութային արժեքների, Հայաստանի Հանրապետության մշակութային հարստության նկատմամբ հոգածության դրսևորումը և պահպանումը:
  - 15) աշխատանք է տանում մարզային ենթակայության կրթական, մշակութային և մարզական հաստատությունները մանկավարժական կադրերով ապահովելու և նրանց վերապատրաստումը կազմակերպելու ուղղությամբ,
  - 16) համակարգում և վերահսկում է մարզային կրթական, մշակութային և մարզական հաստատությունները անհրաժեշտ դասագրքերով, ուսումնամեթոդական ձեռնարկներով ու նորմացույց փաստաթղթերով ապահովելու գործընթացը.

- 17) կազմակերպում, համակարգում և վերահսկում է մարզի կրթական, մշակութային և մարզական հաստատությունների ընդունելության և պետական ավարտական քննությունները: Ըստ անհրաժեշտության մասնակցում է դասախոսների, պարապմունքների և կազմակերպվող այլ միջոցառումների: Սահմանված կարգով այդ հաստատություններում իրականացնում է ուսումնասիրություններ:
- 18) կազմակերպում է առարկայական օլիմպիադաներ, մարզամշակութային միջոցառումներ, աշխատանք է տանում երեխաների հանգստի ու ժամանցի կազմակերպման ուղղությամբ,
- 19) սահմանված կարգով քննության է առնում քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու գանգատները,
- 20) ապահովում է հասարակայնության, համայնքի, հասարակական, բարեգործական կազմակերպությունների մասնակցությունը հանրակրթության ու դաստիարակության կազմակերպման գործընթացին,
- 21) առողջապահության մարմինների հետ համատեղ վերահսկում է մարզային ենթակայության կրթական, մշակութային և մարզական հաստատություններում երեխաների առողջության պահպանման համար համապատասխան պայմանների ստեղծման և անհրաժեշտ միջոցառումների իրականացման գործը,
- 22) առաջարկություն է ներկայացնում կրթական, մշակութային և մարզական հաստատությունների ուսումնամեթոդական բազայի զարգացման և ամրապնդման վերաբերյալ,
- 23) սահմանված կարգով աջակցում է մարզի տարածքում գործող ուսումնական հաստատություններում կառավարման փորձնական համակարգի ներդրման և բարեփոխումների ծրագրերի իրականացման գործընթացին,
- 24) կազմակերպում է կրթության, մշակույթի և սպորտի հարցերի վերաբերյալ մարզային և տարածքային խորհրդակցություններ, սեմինարներ ու քննարկումներ,
- 25) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Մարզպետի որոշումներով և կարգադրություններով վերապահված այլ գործառույթներ:

### III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

11. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է վարչության պետը:
12. Վարչության պետը, վարչության բաժինների (այսուհետև Բաժին) պետերը, Բաժինների գլխավոր մասնագետները, Բաժինների առաջատար մասնագետները, Բաժինների կրտսեր մասնագետները քաղաքացիական ծառայողներ են:
13. Վարչության աշխատողների (քաղաքացիական ծառայողների) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, քաղաքացիական ծառայության դասային աստիճանի հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցված քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: Նրանք ապահովում են իրենց անմիջական ղեկավարների և նրանց վերադաս պաշտոնատար անձանց հանձնարարականների կատարումը և պատասխանատվություն են կրում դրանք չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ օրենքով իրենց վերապահված լիազորությունները վերազանցելու համար:
14. Վարչության պետը.
- 1) անմիջականորեն ենթակա և հաշվետու է Մարզպետին,
  - 2) կազմակերպում, ծրագրավորում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է Վարչության ընթացիկ գործունեությունը,

- 3) կատարում է Մարզպետի կողմից վարվող քաղաքականության մասով՝ Մարզպետի, իսկ քաղաքացիական ծառայության ղեկավարման և կազմակերպման մասով՝ Աշխատակազմի ղեկավարի հանձնարարականները,
- 4) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները, իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու, ինչպես նաև Վարչության առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար,
- 5) լուծում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներ, Վարչության աշխատողներին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ,
- 6) Մարզպետի հանձնարարությամբ մասնակցում է մարզպետարանի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին,
- 7) բացահայտում, վերլուծում և գնահատում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում այդ աշխատանքների կատարումը,
- 8) ապահովում է մարզի հանրակրթական ուսումնական, մշակութային և մարզական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության և պետական կառավարման մարմինների ընդունած որոշումների կատարումը և աջակցում է այդ հաստատությունների զարգացման քաղաքականության իրականացմանը,
- 9) ապահովում է մարզի տարածքում կրթական, դաստիարակչական, մշակութային և մազական ծրագրերի իրականացումը պետական չափորոշիչներին համապատասխան,
- 10) համակարգում է մարզի տարածքում հանրակրթական ուսումնական, մշակութային և մարզական հաստատությունների շենքերի ու շինությունների պահպանման, վերանորոգման, սպասարկման, շահագործման, գույքագրման աշխատանքները,
- 11) համակարգում է հասարակական բարեգործական և միջազգային կազմակերպությունների հետ մարզի կրթության, մշակույթի և սպորտի հաստատությունների համագործակցությունը,
- 12) համակարգում և վերահսկում է կրթության, մշակույթի և սպորտի հաստատությունների պետական պատվերի մասով ծրագրավորված աշխատանքների իրականացումը,
- 13) ապահովում է մարզում կրթության, մշակույթի և սպորտի ոլորտների մրցույթների, փառատոնների, օլիմպիադաների և մրցաշարերի կազմակերպումն ու անցկացումը,
- 14) համակարգում է մարզի բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների պետական պատվերի մասով աշխատանքների ծրագրավորումը, աջակցում դրանց իրականացմանը և շրջանավարտների տեղաբաշխմանը,
- 15) ապահովում է սպասարկվող ոլորտի մասնագետների վերապատրաստման, վերաորակավորման, աշակերտների և ուսանողների հանգստի կազմակերպման աշխատանքների իրականացումը,
- 16) ապահովում է մարզի տարածքում դպրոցահասակ երեխաների հաշվառումն ու նրանց ընդգրկումը ուսումնական գործընթաց,
- 17) Մարզպետի հանձնարարությամբ ապահովում է Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստումը, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների մշակումը,
- 18) Աշխատակազմի ղեկավարին առաջարկություններ է ներկայացնում իր անմիջական ենթակայության տակ գտնվող քաղաքացիական ծառայողների Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով արտահերթ ատեստավորելու, վերապատրաստելու, կարգապահական տույժի ենթարկելու և խրախուսելու վերաբերյալ,
- 19) ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ ներկայացնում է իր անմիջական ենթակայության տակ գտնվող քաղաքացիական ծառայողների ծառայողական բնութագրերը,

- 20) համապատասխան առաջարկություններ է ներկայացնում Վարչության քաղաքացիական ծառայողների բացակայության դեպքում նրանց փոխարինելու մասին,
- 21) աշխատակազմի ղեկավարին է ներկայացնում Վարչության աշխատանքային ծրագրերը,
- 22) այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից՝ սահմանված կարգով, ստանում է Վարչության առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր,
- 23) ստորագրում է Վարչության անունից պատրաստվող փաստաթղթերը,
- 24) Վարչության լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ,
- 25) Մարզպետին, ըստ անհրաժեշտության, ներկայացնում է առաջարկություններ՝ Վարչության աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար,
- 26) Վարչության առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված, ինչպես նաև Մարզպետի գիտությամբ, կարող է հրավիրել խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով համապատասխան մամիների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների,
- 27) ըստ անհրաժեշտության ներկայացնում է համապատասխան զեկուցումներ՝ իր կողմից սպասարկվող ոլորտին առնչվող համապատասխան մարմիններում, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից կատարվող աշխատանքների վիճակի մասին,
- 28) իրականացնում է իր պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ,
- 29) Վարչության պետն ունի Օրենքով, քաղաքացիական ծառայողի պաշտոնի անձնագրով և այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և պարտականություններ (սահմանափակումներ):

#### 15. Յուրաքանչյուր Բաժնի պետ.

- 1) օրենքով սահմանված կարգով կարող է փոխարինել Վարչության պետին՝ նրա բացակայության ժամանակ,
- 2) Վարչության պետի հանձնարարությամբ ապահովում է Բաժնիների առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր պատրաստելը, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցներ մշակելը,
- 3) Վարչության պետին առաջարկություններ է ներկայացնում իրենց անմիջական ղեկավարության տակ գտնվող քաղաքացիական ծառայողների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով արտահերթ ատեստավորվելու, վերապատրաստելու, կարգապահական տույժի ենթարկելու և խրախուսելու վերաբերյալ, ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ ներկայացնում է նրանց ծառայողական բնութագրերը,
- 4) Վարչության պետին է ներկայացնում Բաժնի աշխատանքային ծրագիրը,
- 5) այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից սահմանված կարգով ստանում է Բաժնի առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր,
- 6) համապատասխան առաջարկություններ է ներկայացնում Բաժնի քաղաքացիական ծառայողներ համարվող մասնագետների բացակայության դեպքում նրանց փոխարինելու մասին,
- 7) ստորագրում է Բաժնի լիազորությունների շրջանակներում պատրաստվող փաստաթղթեր, հաշվետվություններ, եզրակացություններ, տեղեկանքներ, զեկուցագրեր և այլ գրություններ,
- 8) Բաժնի աշխատանքներին է ներգրավում մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ, կազմավորվում է աշխատանքային խմբեր, հրավիրում խորհրդակցություններ,